

Գարեգին Ս Վեհափառ Հայրապետի հուղարկավորության արարողությունը տեղի կունենա հինգշաբթի՝ հուլիսի 8-ին, ժ. 10.00-ին, Ս. Պատարագի մատուցմամբ, վերջին օծման եւ քաղման արարողություններով:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԷԶԵՐԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ



Կաթողիկոսական
ընկերությունից
հեղինակ
ապրիլի 4,
1995 թ.



Օրինություն
սրբալույս
մեղանի,
սեպտեմբերի 8,
1996 թ.



Անկախ Հայաստանում առաջին եպիսկոպոսական
շնորհադրությունը, հունիսի 15, 1997 թ.



Գևորգյան հոգևոր ճանապարհի վերաբացումը,
սեպտեմբերի 18, 1997 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ (ԿՅԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ)

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն
Հայոց կաթողիկոսը (ավագանի ան-
վաստ Նշան Մարգարե) ծնվել է 1932
թ. օգոստոսի 27-ին Քնասպուր (Սի-
րիա)։ Նախնական կրթությունն ստա-
ցել է հայրենի գյուղի Ուսումնափր-
ցիկ վարժարանում, որից հետո
նստմանաբար շարունակել է Մե-
ծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության
դպրվանքում (1946 թ.)։ Այստեղ էլ
1949 թ. մայիսի 29-ին ծնունդով է
ստրկավազ։ 1952 թ. ավարտել է Ուս-
մանաբար դպրվանքի ընթացի-
րանի քառերորդ դասարանը։

1952 թ. սեպտեմբերի 28-ին, ծնն-
դով լույս աշխարհ է եկել, ի հիշա-
տակ նորըգ վախճանյալ Գարեգին Ա
Հովսեփյանց կաթողիկոս (Մեծի Տա-
նն Կիլիկիոյ կաթողիկոսություն), վերա-
կոչվում է Գարեգին արքային և դա-
նում Կիլիկիոյ միաբանության ուխտի
անդամ։ Պաշտպանվելով վարդապե-
տ «Հայաստան» Հայաստանի
հայրենիքի սատուածարանում
ընդհանուր ընդհանուր դասընթացի
ընթացում, 1955 թ. հունիսի 5-ին ստանում
է վարդապետական աստիճանը։ Նույն
թվականին պաշտոնավարում է դարե-
վանքում որպես ուսուցիչ և վերապե-
տ։ Որոշ ժամանակ անց (1956 թ.)
ստանձնում է դպրվանքի տեսուչի
պաշտոնը։

1957-1959 թթ. Գարեգին վարդապե-
տն ուսումնառությունը շարունակում է
Օրսիսիոյ համալսարանում, որտեղ
հետևում է աստվածաբանական բար-
ձրագույն ուսման և ստանում է գրա-
նություն ընդհանուր աստիճանի
«Բարեկեցիկ ժողովրդի և Հայ Եկեղե-
ցին» խորագրով կողմ աշխատա-
նությունը (1965 թ. հրատարակվել է
Լոնդոնի Տ. Փ. Կ. հրատարակչա-
տան կողմից, վերադասարանվել է
Նյու Յորքում 1976 թ.)։

1960 թ. Օրսիսիոյ ավարտելուց հե-
տո Գարեգին վարդապետը կրկին
ստանձնում է դպրվանքի տեսուչի
պաշտոնը։

Նույն շրջանում Գարեգին վարդա-
պետը գործում մասնակցություն է ու-
նենում միջկեղծեցական մի շարք հա-
մագումների ու ժողովների որպես
Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսու-
թյան ներկայացուցիչ։ Խորհրդի Ա կաթ-
ողիկոս ընտրությունից հետո (1963 թ.
մայիսի 5) Գարեգին վարդապետը
կարևոր դեր է կատարում ընդհանուր
կաթողիկոսի պաշտոնական այցելու-
թյան ընթացքում։ Միաժամանակ մասնակցում է Ե-Հ
միջկեղծեցական կարևոր համաժո-
ղովների։

Կաթողիկոսի կարգավիճակով մասնա-
կցում է Վատիկանի երկրորդ ժողովի
ներքին հաշտության հիմնադրում (1963-
1965 թթ.) և Ազգային եկեղեցու Լա-
նդի համաժողովին (1968 թ.)։ Նշա-
նական է նաև դերը Արևելյան
արևելյան ուղղափառ դավանակից
քրդ Եկեղեցիների հոգևոր առաջ-
նորդների համագործակցության կազմ-
ակցման գործում։

Այս շրջանում աստվածաբանու-
թյան, գրականության, պատմության
և մշակույթի բնագավառում դասակար-
գվել է ՀԽՍՀ Գործիչ Հայրության երկրոր-
դական վարժարանում, Բեյրութի
«Համագաղափար» Նշան Փառաբան-
չանության, Beirut College for
Women-ում և Բեյրութի Ամերիկյան
համալսարանում դասավորություննե-
րով հանդես է եկել մի շարք եկեղեցի-
ներում։

1963 թ. հունիսի 16-ին, նրան շնորհ-
վում է Մարգարյան վարդապետի աս-
տիճան։ 1964 թ. հունիսի 19-ին ծնն-
դով լույս աշխարհ է եկել Մեծի Տանն
Կիլիկիոյ կաթողիկոսի որդիները։

1971-1973 թթ. Գարեգին եպիսկոպո-
սը հոգևոր պատասխանատու ծառա-
յության է անցնում Երանոս (Նոր Ջու-
ղա)։

1973-1977 թթ. Գարեգին արքայա-
կոսը հոգևոր ծառայության է մեկ-
նում ԱՄՆ (Նյու Յորք)։

1976-1977 թթ. Լիբանանում բռնե-
ված թաղաքային պատերազմի տարի-
ներին վերադառնալով դեր է ունենում
լիբանանահայության օժանդակու-
թյան կենտրոնի գործում։

1977 թ. մայիսի 22-ին Խորհրդի Ա կա-
թողիկոս Հայրապետության շրջա-
նում, ընտրվում է Մեծի Տանն Կիլիկիոյ
արքայական կաթողիկոս։ 1983-ին Խո-
րհի Ա կաթողիկոսի վախճանվելուց
հետո հաջակվում է իրեն Մեծի Տանն
Կիլիկիոյ Գարեգին Բ կաթողիկոս։

Արևելյան արքայում 18 տարիների

գահակալության ընթացքում Մեծի
Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ կաթողի-
կոսը զարկ է տալիս ազգային-կրոնա-
կան, մշակութային և շինարարական
աշխատանքներին։ Գարեգին Բ կա-
թողիկոսը հաստատում է քրիստոնեա-
կան դաստիարակության բաժանմուն-
քը։ Նրա հատուկ ուշադրության
առարկան է դառնում դպրվանքը
(1977 թ. Ամերիկայից այն փոխադ-
րվում է Բիլիֆայա), որն ընդարձակվե-
լով ու արդիականացվելով՝ նպաստում
է աստվածաբանական ուսուցման բա-
րելավմանը։ Գարեգին Բ կաթողիկոսն
առանձնահատուկ ուշադրություն է
դարձնում հրատարակչական գործին,
հիմք է դրվում բանագրան-մանեա-
դարանի շենքի շինությունը։

Կիլիկիոյ կաթողիկոսության տարի-
ների բազմաթիվ անգամներ այցելել
է Մայր Աթոռ Սրբ. Եջմիածին՝ ինչ խոր-
հույսին և թե՛ նորանկախ շրջանում։

1988 թ. դեկտեմբերի 7-ին երկրաշար-
ժից հետո Գարեգին Բ կաթողիկոսը
կանգնեց երջանկահիշատակ Վազգեն
Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կող-
քին՝ բերելով իր եղբայրական սերն ու
գորակցությունը։

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի հոգաբարձուների խոր-
հույս անդամ էր։

Վազգեն Ա կաթողիկոսի վախճանից
հետո, 1995 թ. ապրիլի 4-ին Ազգային-
եկեղեցական սրբազուգում ժողովը
Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ կա-
թողիկոսին ընտրում է Մայրաքաղաք
Երևանում (գահակալության հանդիսա-
րություն տեղի ունեցավ ապրիլի 9-ին
Մայրաքաղաքի տոմին, Մայր տաճա-
րում)։

Ընտրությունից ի վեր Նորին Սրբո-
րյունը իր ողջ եռանդը և ջանքերն ուղ-
ղեց եկեղեցական կյանքի ներքին
կարգավորման ու կազմակերպման,
մասնավորապես Ս. Եջմիածին Հոգե-
վոր ծննդանի գործունեության վերա-
աշխուժացմանը, Զրիստոնեական
դաստիարակության և քաղաքացիա-
կանության գործառնում ու բարգավա-
նմանը, քրիստոնեական քաղաքացիա-
կանության և ժողովրդի մշակման-
ը, եկեղեցիների ու վանքերի վերանո-
րոգմանը, ազգային բնույթի կա-
ռույցների ստեղծմանը, աստվածաբա-
նական, հոգևոր և հայագիտական
հրատարակությունների ավելացմանը։

Եկեղեցու աշխատանքն առավել
նպատակաուղղված դարձելու և ժո-
ղովրդի կյանքում քրիստոնեական
ավանդույթներն անբացեղծ նախա-
նախնությունը՝ Վեհափառ Հայրա-
պետը վերադասարան է ներարկեց
Հայաստանի բնական կառուցված-
քը։ 1996 թ. հայաստանյան մայիսի 4
թվին կողքին ստեղծվեց Նոր և Բն-
Ստեղծվեցին նաև Ուկրաինայի և
Հայաստանի Ռուսաստանի բնույթը։

Վերաշխուժացված Հոգևոր ծննդ-
անի կյանքը։ 1997 թ. սեպտեմբերի
80-ամյա ընդմիջումից հետո, վերա-
բացվեց Գեորգյան հոգևոր ծննդա-
նի հիմնովին նորոգված շենքը։ Հիմք
դրվեց նաև ուսանողների համար նոր
կացարանային համալիրի շինարա-
րությունը։ Այս շրջանում բազմաթիվ
վեց նաև ծննդանի սանդղի բիվը՝
հասնելով շուրջ 120-ի։

Վեհափառ Հայրապետի հովանա-
վորությամբ կյանքի կոչվեց երջանկա-
հիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի
ծրագիրը, Օչակցում՝ Սրբ. Մարգար-
յան Հոգևորական շինքի կողքին
վերակառուցված շենքում, հաստատ-
վեց Սրբ. Մարգար Մառտոյի անվան
դպրատունը, որն այսօր դարձել է գի-
տական և մշակութային կարևոր
կենտրոն։

Գահակալության համեմատաբար
կարճ ժամանակահատվածում Ս.
Օ. Տ. Տ. Գարեգին Ա կաթողիկոսը հու-
կապեցական այցելություններ տվեց
Հայ Առաքելական Եկեղեցու Հայաս-
տանի, Լեռնային Հայաստանի (1995
թ.), Վրաստանի (1995 թ.), Ուկրաինա-
յի, Ռումինիայի (1995 թ.), Կանադայի
(1995 թ.), Ամերիկայի Միացյալ Նա-
ցիոնների (1996 թ.), Հնդկաստանի
(1996 թ.), Բրազիլիայի, Ուրուգվայի,
Արգենտինայի, Իտալիայի (1996 թ.),
Ֆրանսիայի (1997 թ.), Սինգապուրի,
Թաիլանդի, Ավստրալիայի (1997 թ.),
Ավստրիայի (1997 թ.), Անգոլայի (1997
թ.), Եգիպտոսի (1998 թ.), Գերմանիա-
յի (1998 թ.) բնակներ և Կ. Պոլսի հայոց
պատրիարքարանին։ Մեծ ուղևորա-
կանը և հայրական սիրով Վեհա-
փառ Հայրապետը նախագահեց Մեծի
Տանն Կիլիկիոյ Աթոռի նորընտիր կա-
թողիկոս Արամ Առաքելին ծննդավայր-

քյան ու օժանդակությունը՝ 1995
թ. հուլիսի 11-ին։

Վեհափառ Հայրապետը նոր բա-
նադրություն Մայր Աթոռ Ս. Եջմիածին
Եկեղեցու գործունեությանը և ծառա-
յությանը։ Գահակալության տարինե-
րին Վեհափառ Հայրապետը պաշտո-
նական այցելություններ է տվել Մոսկ-
վայի և Համան Ռուսիո պատրիարք
Նորին Սրբություն Ալեքսի Երկրորդին
(1995 թ.), Ռումինիայի Ուղղափառ
Եկեղեցու պատրիարք Նորին Սրբու-
թյուն Թեոֆիլոսին (1995թ.), Վրաց
Ուղղափառ Եկեղեցու կաթողիկոս-
պատրիարք Նորին Սրբություն Իսա-
կ Երկրորդին (1995 թ.), Հանգի Սրբազան
Քահանայապետ և Կաթողիկոս Եկեղե-
ցու պետ Նորին Սրբություն Հովհան-
նես-Պողոս Երկրորդ պապին (1996
թ.), Կ. Պոլսի Տիեզերական պատրի-
արք Նորին Սրբություն Բարդուղի-
մեոս Առաքելին (1996 թ.), Հնդկաս-
տանի արքեպիսկոպոս Ջորջ Մարտի-
րի (1997 թ.), Կապի Ուղղափառ Եկեղեցու
պատրիարք Նորին Սրբություն Հու-
դա Երկրորդին (1998 թ.)։ Այցելել է նա-
և Ժամանակ անց Եկեղեցիների հա-
մաշխարհային խորհրդի կենտրոն։

Վեհափառ Հայրապետը Մայր
Աթոռ Ս. Եջմիածինում ընդունել է հյու-
րընկալել է մի շարք եկեղեցական և
Եկեղեցու պատրիարքների համաշ-
խարհային խորհրդի գլխավոր բար-
եկալիքներ, Կոնգրես Ռայզերին։ Վե-
հափառ Հայրապետի այցելել են նա-
և պետական բազմաթիվ բարձրաս-
տիճան այլեր, Նշանավոր քաղաքա-
կան գործիչներ, գիտություն և մշա-
կույթի ականավոր դեմքեր։

Վեհափառ Հայրապետը հեղինակ է
աստվածաբանական, հայագիտա-
կան, փիլիսոփայական, քաղաքացի-
ական և գրական բազում ուսումնա-
սիրությունների և հոդվածների, ինչ-
պես նաև հայերեն, անգլերեն, ֆրան-
սերեն և այլ լեզուներով երկու տաս-
նյակից ավելի գրքերի։ Նորին Սրբու-
թյունը ՀՀ գիտությունների ակադեմի-
անության պատվավոր անդամ է։
Վեհափառ Հայրապետը որպես խո-
րհ մասնակցություն, արժանացել է աշ-
խարհի մի շարք կրթական և գիտա-
կան հաստատությունների և համալ-
սարանների պատվավոր դոկտորի
կոչման։

1998 թ. ապրիլին Ամենայն Հայոց
կաթողիկոսը մեկնեց Միացյալ Նա-
ցիոնների Ամերիկայի հայոց բնա-
100-ամյա հոբելյանական հանդիսու-
թյուններին նախագահելու նպատա-
կով։ Այցելության ընթացքում Վեհա-
փառ Հայրապետը ենթարկվեց նաև
քննական քննության, որին հետևեց
տեղական բուժման շրջանը։

1998 թ. հոկտեմբեր և 1999 թ. փե-
տվար ամիսներին Վեհափառ Հայ-
րապետը երկու անգամ վերահաստա-
րություն կոչեց։

1999 թ. մարտին Մայր Աթոռ վերա-
դարձեց առաջ, Վեհափառ Հայրապե-
տը Վատիկանում Հռոմի պապի հետ
մեկտեղ կատարեց «Հռոմ-Հայաս-
տան» ճյուղաճյուղի բազում ճիշդ-
ված Հայաստանում քրիստոնեության
ընդունման կրոն հիշակամ 1700-
ամյակին։ Վեհափառ Հայրապետի
Վատիկան կատարած այցի ընթաց-
քում Հովհաննես-Պողոս Բ պապն ըն-
դունեց Հայոց Հայրապետի հրավերը
հուլիսի 24-ը այցելել Մայր Աթոռ Սրբ.
Եջմիածին։ Վեհափառ Հայրապետի
առաջադրված վիճակի վարարացման
հետևանքով նախատեսված այցելու-
թյունը չկայացավ։

1999 թ. հունիսի 29-ին՝ ժամը 17.50-
ին Ամենայն Հայոց Հայրապետը եր-
կարատես և ծանր հիվանդությունից
հետո ի Տեր հանգյալ։

Նորին Սրբություն Գարեգին Ա կա-
թողիկոսի գործունեության հիմնական
ուղղությունը եղավ եկեղեցական
կյանքի վերանորոգումը և վերաշա-
խուժումը։ Վեհափառ Հայրապետը,
Հայ Առաքելական Եկեղեցու պաշտո-
նական հիմնադրում 1700-ամյակը
համարելով որպես մի նոր Հոգեզա-
նուտ հայ ժողովրդի կյանքում, այն
դիմում էր իրեն Հայ Եկեղեցու քրի-
ստոնեական անհրաժեշտ վերանորոգ-
ման եզակի ավանդույթների հատ-
կապես նորանկախ ու ազատ Հայաս-
տանի Հանրապետությունում։

ԳԻՎԵՐ ՄԱՅՐ ԱԹՐՈՍ ԵՒ ԵՋՄԻԱԾԻՆ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՄԽԵԹԱՐՈՒԹՅԱՆ

S. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՊՈԶԱՊԱՆՅԱՆ

Կաթողիկոսական տեղապահ

«Նա եղավ մեծ կաթողիկոս...»

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Հայաստանյայց Եկեղեցին Ամբողջ Հայաստանի ժողովուրդով եւ սփյուռքահայությունը մեծ վշտի մեջ են այս օրերին. որովհետեւ կորցրեցինք շատ արժեքավոր մի կաթողիկոսի՝ համահիմն Գարեգին Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի: Ես անձնապես նրա հետ ծանոթացել եմ իմ Ամբիկոսի ուսանողության տարիներին, երբ ինքը վերջին յարամի աշակերտ էր. ես առաջին յարամին: Հետագայում նա ձեռնադրվեց արքեպիսկոպոսի աստիճանի վերակացու եւ միշտ էլ օրինակ է հանդիսացել այդ սկզբնական տարիներին, առաքինության, աշխատանքի, հարատևության: Նա եւ գրական շնորհներ է ցուցաբերել: Երբ ամեն շաբաթ արվեստի եւ մշակույթի նվիրված երեկույթներ էին ունենում,



Վրաց կաթողիկոսի հեղինակաբեր դուռն, մայիսի 28, 1997 թ.

ղիկոս (17-րդ դարում Եդիսաբեր Այնթապից) նույն ձևով ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Իր կաթողիկոսական շրջանը՝ չորս ամբողջ տարիներ, եղավ արդյունավետ մի շրջան: Նա գրքի մարդ էր, եւ այստեղ ավելի քան 300 ամուսն գիրք հրատարակվեց, մեկ մասը՝ իր գրածներին: Նա կրթության մարդ էր. Գեորգյան հոգևոր ճեմարանում դասեր տվեց, սարկավագների մտքերը պայծառացրեց եւ լուսավորեց՝ իր գիտելիքներն այնտեղ սերմանելով: Նրա շրջանում Գեորգյան ճեմարանն ամբողջությամբ վերանորոգվեց եւ բացվեց:

Նա մշակույթի մարդ էր. արվեստի մարդ էր: Սիրեց արվեստը. մշակույթը եւ գրականությունը եւ ամեն կերպ սատար հանդիսացավ այդ բոլորի մեկ թաշ առաջընթացին:

Նա նաեւ հատկապես էկումենիստական մի փառավոր կերպար էր. որպես էկումենիստ՝ երկար տասնամյակների վաստակ ուներ էկումենիկական շարժման մեջ, ինչպես նաեւ Մերձավոր արեւելքի քրիստոնյա հարաբերակցության էկումենիկական շարժման ատենակալությունում էր արել երկար տասնամյակներ: Նա իր կաթողիկոսության կարճ ժամանակահատվածում կարողացավ եւ Հայաստանի, եւ Սփյուռքի մեր բոլոր բեմերն այցելել, մեր ժողովուրդին մխիթարել Սուրբ Էջմիածնի սերը եւ հարգանքը տարածելով նրանց սրտերում: Նա եղավ մեծ կաթողիկոս: Նա, կարծեք, որպես լուսավոր գիտավոր աստղ փայլեց հայ ժողովրդի երկնականների վրա եւ կարողացավ իր պայծառ շողերը բողբոջ մեր կյանքի վրա:

Թող Աստված օրինի նրա հիշատակը. հողը բերեք աս վրան, եւ իր ցանած սերմերն արդյունավորվեն՝ մեկի տեղ երեսուն, վաթսուն եւ հարյուր:

Հիշատակն արդարաց օրհնությամբ եղիցի:

S. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ

«Վեհափառ Հայրապետի կյանքը սեր էր, գործը՝ անձնավորում»

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ողջ միաբանությունը համակված է տխրությամբ, ցավի մեջ է. վշտի մեջ է. որովհետեւ կորցրել է իր սիրելի Հայրապետին: Ընդամենը չորս տարի է, որ պաշտոնավարեց Վեհափառ Հայրապետը. որ գործեց որպես Ամենայն Հայոց կաթողիկոս. սակայն այդ չորս տարուրեւ հասցրեց կատարել իրագործումներ, որոնք իր ամուսն հավիտենական սիրտ արժանազան մեր ազգային պատմության մեջ, մեր Եկեղեցու պատմության մեջ՝ որպես մեծագույն հայրապետներից մեկը, որպես լավագույն առաջնորդներից մեկը Հայ Առաքելական Եկեղեցու: Հայոց Հայրապետը մեծ մտավորական էր, մեծ հոգեւորական, նա խորը հավատքի տեր մի անձնավորություն էր: Հավատում էր իր ժողովրդին, հավատում էր իր Եկեղեցու առաքելությանը՝ ժողովրդի կյանքում եւ հայրենի պետության կայացման եւ գործացման գործում: Վեհափառ Հայրապետի կյանքը սեր էր, գործը՝ անձնավորում էր:



Երեսնամյա Մայր Եկեղեցու հիմնօրհները, ապրիլի 7, 1997 թ.

Վեհափառ Հայրապետը, վստահ եմ, որ բազում ծրագրեր ուներ իրագործելու, բազում երազներ ուներ կյանքի կոչելու, սակայն անժամանակ մահը անավարտ բողբոջ, կիսատ բողբոջ եւ այդ պարտքը այսօր մեր՝ եկեղեցականներիս ուսերի վրա է ծանրացած՝ ամենաթափառ աստիճանից սկսյալ մինչեւ ամենախոնարհ աստիճանը:

Եւ կարծում եմ, Հայոց Հայրապետի հիշատակի առջեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը համախմբում պիտի փորձի լրացնել, ամբողջացնել այն բոլոր կիսատ ու անավարտ, որ Վեհափառ Հայրապետի երազն էր, նրա իղձն ու ցանկությունը:

S. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ԱՇՈՅԱՆ

1700-ամյակի գրառնչակի վարիչ-բարոյաբան

«Մենք բոլորս հայրակորույս ենք, բայց մենք որդեկորույս ենք...»

Գարեգին Վեհափառն ինձ համար նախ եւ առաջ մնում է որպես ուսուցիչ: Լինել վարդապետ, եպիսկոպոս թե կաթողիկոս՝ իր մեջ կար ուսուցչի խմորը, դաստիարակելու, ներշնչելու, նոր սերունդին պատգամ մը տալու, ոգի մը տալու տաղանդը: Եւ իրապես իրենիստապարտ եմ, որ ունեցած եմ զինքն երբեք ուսուցչի՝ բարոյագիտության, աստվածաբանության, բայց հատկապես Հայ Եկեղեցու պատմության, որովհետեւ կապերը Հայ Եկեղեցու պատմությանը: Օրմանյան պատմաբանի «Ազգապատմություն» կրթագրքի մեջ կապում եմ Եկեղեցու պատմությունը եւ կենդանացմանը նաեւ այն երեւոյթը, թե Հայ Եկեղեցու մեջ ով որ մեծ հայրապետ եղած է, եղած է նաեւ տարբեր:

Նա հավատում էր անկախ Հայաստանին եւ հավատում էր, որ անկախ Հայաստանի մեջ Եկեղեցին բացառիկ կարեւոր դեր ունի խաղալու, եւ ինքը պիտի ըլլար այն հայրապետը, որ պիտի գար ու իր նպատակները նոր Հայաստանի կերտումին, 21-րդ դարու անկախ, գորավոր, միացյալ Հայաստանի կերտումին: Այդ հավատով եկավ, պայքարեցավ, բայց պայքարեցավ նաեւ մահվան դեմ: Դարանակալ հիվանդությունը չթողուց, որ ինքն իր երեզներում հասնի:

Իր գերագույն թերեւս անկատար մնաց, բայց իր տեսիլքը մերն է, իր տեսիլքի ուխտավորները մենք ենք, իր աշակերտներն ենք, Հայ Եկեղեցու սպասավորներն՝ ամենուրեք, աշխարհի բոլոր կողմերում, բայց հատկապես կիսատ մնաց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ, որում այնքան սեր եւ նվիրում ցույց տվավ, այս Մայր Աթոռի միաբանությունը, անոր երիտասարդ միաբանները պիտի դառնան իր գործակիցները իր մասին հետո եւ պիտի

Այս առիթով՝ մաե որպես հոգու պարտք, իմ սրտի շնորհակալական խոսքն եմ փոխանցում մեր ժողովրդի զավակներին, մեր հայրենի պետությանը, օտար պետությունների ղեկավարներին ու եկեղեցիների պետերին, անհատ անձանց, միջազգային կազմակերպություններին, որոնք այս օրերին հարյուրավոր հեռագրերով եկան մխիթարելու մեզ, եկան վշտակցելու մեզ, եկան սրտակցելու եւ գորակցելու մեզ: Այդ բազմահարյուր հեռագրերը, հեռախոսազանգերը վկայություն են Հայոց Հայրապետի վաղած միջազգային մեծ հեղինակության ու սիրո:

Թող երջանակահիշատակ Հայրապետի օրհնությունը շարունակի հովանի լինել մեր ժողովրդին, շարունակի ուղեկից դառնալ Հայ Առաքելական Եկեղեցու եւ նրա սպասավորներին իրենց առաքելության մեջ: Թող Հայոց Հայրապետի խոսքը մշտապես, ինչպես ինքն էր ասում, որպես նշխարք բաժնիկ մեր ժողովրդին՝ նրանց հավատքը գործացնելու, նրանց կյանքը օրհնյալ դարձնելու համար:

Թող յույս հագնի Հայրապետի հոգին եւ բոլոր նրա հիշատակը անմահ լինի:

S. ԸԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ԱՇՈՅԱՆ

Երեսնամյա պետական աստվածաբանության ֆակուլտետի ղեկավար

«Նա եղավ մեր ամբողջ եկեղեցականության փայլուն դիմագիծը»

Այսօր ինձի համար խոր ցավ է, որ խոսիմ Վեհափառ Հայրապետի մեր մասին, որ ճանցած եմ ասրկավազության օրերին Ամբիկոսի մեջ: Այն ատեն դարձավ մեծ անձնավորություն ասան էր եւ մնաց ու եղավ մեր ամբողջ եկեղեցականության փայլուն դիմագիծը ամբողջ աշխարհի մեջ:

Թեեւ ինքը Կիլիկիայի Աթոռի կաթողիկոս եղավ երկար ատեն, սակայն՝ իրապես ամեն տեղ իրեն մեջ կտեսնեինք Վազգեն լուսաւորի կաթողիկոսի կողքին այն մեծ եկեղեցականը, որ իր ազդեցություններով, իր իմաստունությամբ, աստվածաբանական իր մտածողությամբ լույս կփռեր մեր Եկեղեցու վրա: Նրա կորուստը շատ մեծ է, որովհետեւ անհիշալից իր Աթոռին վրա մտած խոշոր ծրագիրներ ձեռնարկեց իր գրովին: Հիվանդությունը խլեց ան մեզին, խլեց այնպիսի պատիւ մը, երբ մեր Եկեղեցին եւ Հայաստանը ամենեւնի շատ պետ ուներ իր ծառայությանը:

Իր ծրագիրներից պիտի հիշել այստեղ Հոգևոր ճեմարանը, Զարուկության կենտրոնը, այսինքն՝ եկեղեցականներ պատրաստելու եւ կրթական դասավանդության ուսուցիչներ պատրաստելու երկու մեծ ծրագիրներ,

որոնք պիտի վերաբրիստեցնեցին Հայաստանը: Մշակեց շինարարական ծրագիր մը՝ կապված Հայաստանյայց Եկեղեցու, ազգային Եկեղեցի հիմնվելու 1700-ամյակի հետ, ուղեց վերակազմել վանքեր, կառուցանել Երեսնամյա տաճարը, այստեղ՝ Էջմիածնի շուրջ կարեւոր հիմնարկներ, որպեսզի Մայր Աթոռի գործունեությունը ավելի տարածուն լինի, եւ վերջապես ուղեց, որ մեր Եկեղեցին, Մայր Աթոռը մշակել շատ սերտ հարաբերություններ Հայաստանի կառավարության հետ, որովհետեւ Հայաստանը պիտի վերակառուցվի ոչ միայն տնտեսականորեն, այլեւ հոգևոր տեսակետով, հայկական ազգային նկարագրի, իրենից հայկական ցույցով նկարագրի վերակազմումով: Այդ ինքը կրճար իրագործել, ուներ բոլոր կարողություններ՝ այդ ծրագիրները իրագործելու, եւ սակայն այսօր մենք կգտնենք ինքզինքներս ընդհատված աշխատանքի մը հանդեպ:

Կարծեքք առ Աստված այն հույսով, որ Աստված պիտի տա մեզ նոր կաթողիկոս, որ կարենա Գարեգին Վեհափառ Հայրապետի աշխատանքը իր ավարտին հասցնել:

Մենք կարծեքք մեր հանգուցյալ Վեհափառի հոգու հանգստության համար: Աստված ողորմի Գարեգին Հայրապետի հոգին:

Տ. ԽԱՇԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՊԱՐՍԵՄՅԱՆ

ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ

«Վեհափառ Հայրապետը իր անշուղ ցույց տվավ, թե ի՞նչ կնշանակե պարտաճանաչություն»

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետի վախճանումը մեծ կորուստ է համայն հայ ժողովրդի համար. Հայ Եկեղեցու համար է այդ Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար: Մեծ կորուստ է, որովհետև Վե-

րոս մեջ, ես տեսա, թե որքան պարտաճանաչ էր. նույնիսկ ցավի, տառապանքի ամեն դժնդակ օրերում Վեհափառ Հայրապետը միշտ մտահոգված էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, հայրենիքով, Հայ Եկեղեցիով: Կատարյալ մասնակցե՞ր, հեռագիրներ, ֆաք-



Ամերիկայի հայոց թեմի հայրապետականի պոնտիֆիկատի օրերին, մայիս, 1998 թ.

հափառ Հայրապետն իր՝ մոտավորապես 45 տարիներու հոգեւոր ծառայության ընթացքին իսկապես դարձավ ժառանգելու և պատասխանող Հայ Եկեղեցու, հայ ժողովուրդին և հայոց հայրենիքին:

Նշու Յորքին մեջ բուժումն ետքը, երբ վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ասկե գրեթե երկու ամիսներ առաջ, Մայր տաճարի մեջ միաբանության ուղղված իր խոսքին մեջ անդրադարձավ պարտաճանաչության մասին: Ըսավ, թե այս անցնող ամիսներու իմ հիվանդության ընթացքին ես ավելի լավ կըրթա տեսնել, թե որքան կարևոր է պարտաճանաչությունը անձի մը, անհատի մը համար:

Մենք՝ հոգեւորականներ կամ աշխարհականներ, մեզմե ամեն մեկը կոչված է պարտականության մը համար, առաքելության մը համար, հետևաբար պետք է գիտնանք այդ պարտականությունը և լավագույն կերպով կատարենք: Ես կ'իտրեմ, որ Վեհափառ Հայրապետը իր ամբողջ կյանքի ընթացքին՝ մասնավորաբար հոգեւորական լատիպետ, եպիսկոպոս, կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո և ապա կաթողիկոս Ամենայն Հայոց, իր անվճի ցույց տվավ, թե ի՞նչ կնշանակե պարտաճանաչություն: Մանավանդ անցնող 12 ամիսներու ընթացքին, երբ ան կըուժվեր Նշու Յորքի հիվանդանոցնե-

սեր եւ ամիջապես կկարդար այդ բոլորը եւ կփորձեր բոլորին պատասխանել: Եւ ահա վախիկ այս եւս ցույց կուտա, թե ինքը որքան պարտաճանաչ էր, որքան կսիրեր իր առաքելությունը՝ իրեն մեծագույն պատասխանող կաթողիկոսը Ամենայն Հայոց: Կաշխատե՞ր, գիշեր-ցերեկ կաշխատե՞ր իր Եկեղեցիին, իր հայրենիքին, իր ժողովուրդին, իր մշակույթին համար: Բառին բուն իմաստով՝ հայ ժողովուրդի մեծագույն ծառան, պատասխանը իր անկեղ և առիկա ցույց տվավ իր կյանքով, իր գործով:

Գծախառնաբար, մենք կանուխ կորստեցինք Վեհափառը, անկեղ ուներ նրա գնորդ, տեսիլքներ եւ այդ երազներու մասին կ'ուտե՞ր, կարտահայտվե՞ր, կ'ըրէ՞ր եւ կուգե՞ր, որ այդ տեսիլքներն իրականություն վերածվին: Կմտահոգվե՞ր հայ ժողովրդի, հայրենիքի, Եկեղեցու ապագայով, եւ սակայն այդ բոլորն իբրեւ սուսկ մտահոգություն չէին մնար, կփորձե՞ր, որպեսզի իր գործով, իր աշխատանքով կարողանա գործացնել մեր բոլոր արժեքները, հայկական հոգեւոր եւ մշակութային արժեքները:

Վեհափառ Հայրապետին վախճանումը մեծ կորուստ է մեր բոլորին համար: Ես կ'ըրեմ, որպեսզի Աստված իր հոգին լույսեւոր մեջ հանգեցնե, կարգեմ, որ իր սրբանշին երազներն իրականություն վերածվին:

Տ. ՀՈՎՀԱՆՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Կանադահայոց թեմի առաջնորդ

«Անոր կյանքը դարձնեմք մեզ բոլորիս համար օրինակելի»

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար սգի օրեր են, որովհետև ազգիս Վեհափառ Հայրապետ Նորիկ Սուրբ Օմուրյուն Տեր Տեր Գարեգին Առաջին կաթողիկոսը երկարատև հիվանդությունից հետո իր հունգ ավանդեց: Վեհափառ Հայրապետը, որուն ես անձնապես ճանաչություն պատե- հույությունը ունեցած եմ շուրջ 30-35 տա- րիներն ի վեր, Հայաստանյայց Առաքե- լական Եկեղեցու անդատանքն ենթա իր կյանքը բոլորողներն ծառայության վերա- ծած այն արժանավորագույն եկեղեցա- կաններն մեկն է, որ ամբողջապես կրթա- իր ըմբռնել Հայ Եկեղեցու ոգին, լիիրավ իմաստով իր գործունեությունն է իր խոս- քերուն մեջն զրոյեցնում էր Հայ Եկեղե- ցու աստվածաբանությունը, պատմու- թյունը, ավանդությունները, եւ իր բովան- ղակ կյանքը արժեւորած էր՝ ըլլա Կիլի- կիո կաթողիկոսությունն ենթա, ըլլա ար- տաւասմանը տարբեր թեմերն ենթա եւ սամալական վերջին չորս տարիների ըն- թացքին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ ծավալած իր բեղուն գործունեու- թյանը:

Մեզի բոլորիս համար ծանոթ է, թե Վե- հափառ Հայրապետը ավելի քան 40 տա- րիներ շարունակ իր խոսքով, իր ոգեղեն ներկայությամբ խանդավառած էր մեր Եկեղեցու հավատացյալները, անոնց կյանքը սերտորեն կապած էր մեր Մայր Աթոռ Եկեղեցուն, եւ քրիստոնեական սե- րը, հավատը եւ հույսը, որոնք երբեք իմ- նական առաքինությունները պիտի ըլլան յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքի մեջ, այդ երեքին մշտապես հրավիրած էր Վեհափառը՝ իր խոսքով, իր կյանքով:

Այսօր, երբ կբաժնվի Վեհափառ Հայ- րապետը մեր կյանքեն, յուրաքանչյուր եկեղեցականին համար խորհումն է եւ մտածումն՝ պահ մըն է, որ պետք է ըլլա տեսնելու, թե ինչպիսի կյանք մը ապրե- ցավ անկեղ և անոր կյանքը դարձնելու մեզի բոլորիս համար բարի եւ օրինակելի կյանք, որպեսզի եկեղեցաց հոգեւորա- կաններս վերականգնենք եւ իմաստավո- րենք եւ արժեւորենք եկեղեցականին մեր կոչումը ու բարոյական կյանքը:

Խուճկ եւ աղոթք անոր հիշատակին, ամեն:

Տ. ՎԱԶԳԵՆ ՎԱՐԳԱՊԵՏ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ


Ս. Էջմիածնի ԲԳԲԿ-ի վարիչ-տնօրեն

«Նա լայնախոտ անջ էր, ներողամիտ, վեհանքն, իմաստուն...»

Քանի դառ հողին չի հանձն- ված Վեհափառ Հայրապետի անցյունը, ու մենք ամեն օր թեր- քերի ու հեռուստատեսության միջոցով տեսնում ենք մեր Վե- հափառ Հոր պատկերը, լսում խոսքը, այս ամենից ապրող մարդու զգացողություն ենք ու- նենում...

Պետք է նշեն, որ դեռ Կիլի- կիո Աթոռի գահակալ եղած ժամանակ մեծ պատկառանք են ունեցել նրա հանդեպ՝ ըն- քերցելով նրա գրքերը, լսելով քարոզները ու խոսքերը, տե- նելով նրա կատարած եկեղե- ցաշեն, մշակութային, հայրե- նասիրական գործերը, սերունդ պատրաստելու աշխատանքը: Իսկ երբ արդեն եղավ Ամե- նայն Հայոց կաթողիկոս, տեսա արդեն նաեւ մի բարի հոր, վա- նականությունը շատ սիրող, իր ժողովրդին շատ սիրող, նրա կայքով ապրող Հայրապե- տի: Նա լայնախոտ անձ էր, ներողամիտ, վե- հանքն, իմաստուն, եւ ամեն անգամ որեւէ գործով գրուցելով նրա հետ, երբ դուրս էի գալիս, միշտ հիշում էի, թե Սարայի թագու- հին, Սողոմոն Իմաստունի առջեւ կանգնած, ինչ խոսք ասաց, «Երանի քո ծառաներին, որ քո առջեւ կանգնած՝ միշտ քո իմաստուն խոսքերն են լսում»: Այդ խոսքերն ինձ հա- մար շատ կենդանի դարձան, երբ ես չիվեցի Գարեգին Վեհափառի հետ:

Մենք՝ որպէս Քրիստոնեական դաստիա- րակության կենտրոնի պատասխանատու, նրա հոգեւոր ծնունդն ենք եւ այսօր մեր ամ- բողջ գործունեությամբ պարտական ու երախտապարտ ենք նրան: Եւ ինչ էլ որ քա- ռոզակական գրասենյակը այսօր եւ ապագա- յում տեսնեմք, մեծավ մասամբ պիտի մկիրվի Գարեգին Առաջինի հիշատակին, մի հեռա- տես Հայրապետի, որը մեծ ըմբռնումով



Վեհափառ Հայրապետը Բարոզական կենտրոնի սրտիկայում, օգոստոսի 6, 1997 թ.

ստեղծեց այդ գրասենյակը, միջոցներ գտավ եւ փորձեց մեր ազգին հաղորդ դարձնել սե- փական Եկեղեցուն: Ամենամեծ ցավը Վեհա- փառ Հայրապետի դա էր, որ Հայաստանում ժողովուրդը եւ Եկեղեցին մի քանի անաստ- ված տասնամյակների հետևանքով անհա- դորդ են դարձել, եւ այդ անբնական վիճակն էր ուզում հիմնովին փոխել...

Այսօր պիտի կրկնեմ՝ ասելով, որ անհրա- ժեշտ է այլեւս նրա հիշատակը ոգեկոչել՝ նրա երազներն ապրեցնելով, ինչպես որ պիտի Սեւակն ասեր՝ «կոչնեմ ապրողաց», որովհե- տեւ մենք, ապրելով եւ լավ աշխատանքներ կատարելով, ոչ միայն հիշատակը պիտի պահենք, այլ կենդանի դարձնենք նրա ներ- կայությունը մեր մեջ: Մեծ անձ էր, եւ մենք շատ ենք հավատացել նրան, այնպիսի հա- վատով, որով որ հավատացին առաքյալները Քրիստոսին ու դուրս եկան քարոզելու աշ- խարհի բոլոր անկյուններում:

Հիշատակն արդարի թող օրհնությամբ լի- նի:

ԲԱԳԲԱՏ ԱՐԵՂԱ ԳԱՆՍՅԱՆ

ՈՐԴԻՆԱԿԱՆ ԽՈՐԱՐՀՈՒՄՈՎ ԽՈՍԲ ԱՇԽԱԿԵՐՏԻ

Այս վարկյանին որեւէ խոսք, որեւէ ար- տախայտություն կամ բառ պակասա- վոր են Վեհափառի հիշատակը հավերժաց- նելու, նրա ապրածը, տեսածը, գործածը խոս- քով մարմնավորելու համար: Մենք, երիտա- սարդ սերունդ լինելով, իր խոսքերով, իր բնու- րագրածը՝ իր սերունդը լինելով, մոտիկից տեսանք, ապրեցինք, լսեցինք, աղոթեցինք այդ մեծության հետ: Այսօր ես հիշատակի խոսք չեմ, որ ուզում եմ ասել, այլ իր ապրածի, իր գործածի, իր տեսիլքների մասին: Առանց չափազանցություն՝ Վեհափառ Հայրապետը 20-րդ դարի մեծագույն մտավորականներից էր: Վերջին չորս տարիներին՝ այդ փոքր ժա- մանակահատվածում գալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իրեն հասուցել, իր բնույթ- նը հասուցել եռամյակ, սիրով, հավատքով եւ տեսիլքով փորձեց անել այն ամենը, ինչ մենք չէինք կարողացել անել վերջին 80-100 տար- վա ընթացքում, ինչ կորցրել էր Եկեղեցին, ինչ կորցրել էր հայ ժողովուրդը:

Բայց, ցավով, ասում եմ՝ կյանքն իր օրեք- ներն ունի, մահն իր օրեքներն ունի, Աստուծո մախախմանությունն անքննելի է: Եւ այսօր այս խառը մտածումների մեջ պարզապես մի հարց է առաջանում, թե ինչն է՝ Վեհափառ մեկնեց: Եւ ես կ'արժանեմ եմ, որ այդ հարցի պատասխանն է՝ մեր շնակցական իր պատ- ճառը, մենք եղանք պատճառը իր մեկնման: Մի տեսակ խիստ եմ երեխա ասում, թե ինչ է խոսքը հեղուկ, բայց Աստված մեզ պատժելու համար տարավ ճրագ: Ինչու եմ այսպես ասում, որովհետեւ իր կենդանության օրոք նա, ցավով արդի, շնակցակցի, շնակցակցի՝ որպես պարզ մարդ, շնակցակցի՝ որպես մեծ մտածող, շնակցակցի՝ որպես Եկեղեցու ու հայրենիքի մկիրված: Վեհափառ Հայրապե- տին մոտիկից ճանաչելով՝ ինձ համար նրա ամենամեծ առաքինություններից էր մարդը: Նա իրող հողեղեն էր՝ հողից ծնված, մեծա- ցած, եւ հավակնությունը չունեց իրեն հոգե- դեն ներկայացնելու, այլ պարզապես իր ձգ- տումն էր, իր տեսիլքն էր, որպեսզի հոգեղեն դառնա հողեղեն, եւ հողեղենը դառնա հոգե- դեն, այդ միասնությունն էր իր տեսիլքը: Եւ ինքն իր առանձնություն մեջ մնաց որպես

պարզ մարդ, մնաց իր խոսքերով ասած՝ Քե- սարի շնախարհիկ գյուղում ծնված մի գյու- ղացի, պատանի՝ իր ամբողջ կյանքի ընթաց- քում: Եւ իր հասարակական կյանքի մեջ, իր առանձնությունից դուրս՝ մնաց անհասանելի գազար:

Եւ այս վարկյանին ես հիշում եմ իմ կյան- քի մի փորձառությունը, որն ինձ հիպսելու եւ հպարտության զգացումով էր լցրել: Դա Վե- եննայում տեղի ունեցած Գրացի՝ Եփրուսյա- կան եկեղեցիների խորհրդի նիստն էր, որի պ- խալով քանակաթուն էր Վեհափառ Հայրապե- տը: Եւ մարդիկ մոտենում էին, եկեղեցական- ներ մոտենում էին մեզ՝ որպես հայ եկեղեցա- կանների եւ պարզապես երանությամբ էին խոսում մեր մասին, որ հայ եկեղեցական ենք, շնորհիվ Վեհափառ Հայրապետի: Եւ հիշում եմ նաեւ Վրաստանում վրաց եպիսկոպոսի արտահայտությունը, թե երանելի է այն ժողո- վրդի արգանքը, որ այսպիսի մեծ Հայրապետ ունի: Բայց եպիսկոպոսն ասաց, «Չե՞ր Վե- հափառն ինձ խրախուսեց, ստիպեց իր խոս- քով, որպեսզի ես հայերեն տվորեմ եւ հայե- րենով կարողամ իր գրածները»: Այսպիսին էր Վեհափառը, որ կարող էր մարդկանց սրտերը շարժել դեպի իր Հայրենիքը, դեպի իր Եկեղե- ցին: Վեհափառ Հայրապետը, այդպիսին լի- նելով հանդերձ, համեստությամբ մի տիպար էր, երբեք էլ կեղծ համեստություն չէր անում, այլ այդպիսին էր, իր խառնվածքն էր այդ: Վեհափառն իր համեստությամբ մեզ օրինակ դարձավ, մեզ դաս տվեց, թե ինչպես պետք է ապրել, եւ խոնարհությամբ մնամկել իր երկ- նավոր Տիրոջը՝ Աստուծոն մնամկել:

Մեզ համար, մեր մոր սերնդի, մորից եմ կր- կնում, իր բնութագրմամբ՝ իր սերնդի համար մեծագույն երանություն էր իր կողքին ապրե- լը, պարզապես մեզ համար նա կյանքի հա- լը, մայրամբ եղավ, կյանքի դաս եղավ, ցավով, կարճ տեւեց այն, բայց Հայրապետի խոսքը, բառ ու բանը, բայցվածքը, գործը, մտածումը, պարզապես հայաբքը, մայիլը, աչքերը, ամեն ինչը մեզ համար գիրք ու տետր էին, գրիչ էին: Եւ իր մտածումներից մեկն էր, որպեսզի մոր սերնդին կարողանա կրթել 20-րդ դարի սկզբի Հայրապետությունը՝ էջ 11

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ ԵՒ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՈԳՈՎ



Հովհաննես-Պողոս Բ պապի հետ, Վարդիկան, դեկտեմբերի 10, 1996 թ.



Մոսկվայի և Համայն Ռուսիո պապրիարք Ալեքսի Բ-ի հետ, Ս. Էջմիածին, մայիսի 3, 1996 թ.



Անգլիկան եկեղեցու առաջնորդ արքեպիսկոպոս Չորջ Քերիի հետ, Քենթրբերիի քաճար, նոյեմբերի 6, 1997 թ.



Կոստանդնուպոլսի Տիեզերական պապրիարք Բարդուղիմեոս Ա-ի հետ, Ս. Էջմիածին, հունիսի 21, 1997 թ.

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Ս. Էջմիածին ԲՂԲԿ-ն օրերս լույս ընծայեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի ասույթների ու պատգամների ընտրանին՝ քաղված Վեհափառ Հայրապետի գրական ժառանգությունից (կազմող՝ Հայկանուշ Մեսրոպյան): ԲՂԲԿ-ի տնօրինությունը գրած առաջաբանում ասվում է. «Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետի գրական և հոգևոր ժառանգությունն այնքան ընդգրկուն ու հարուստ է, որ անհնարին է նրանում արտայայտուած գաղափարներն ու խորհրդածությունները ամփոփել մեկ ժողովածուում: Որպես Հայ եկեղեցու մտաւորական հոգևորական նա իր ստեղծագործություններում քրիստոնեական աշխարհընկալումով, խորաբանական մտքով ու հարուստ կենսափորձով անդրադառնում է մարդ արարածին, տալիս նրա էություն վերլուծությունը, քննում նրա հոգեբանությունը: Հին իմաստասերների նման ուսուցանում է մեր կեանքի իրաբանչյուր օրն արժեքները և ճիշտ ապրելու արուեստը»:

Ստորև ներկայացնում ենք հատվածներ ժողովածուից:

Քրիստոսի մարդեղությունը, այսինքն՝ Իր որպես Աստուած մարդկային կեանքի մէջ գոյութեան պէտք լայտնախլը, աստուածայայտնութիւնը, հանդիպումն է Աստուծոյ և մարդուն, ամենէն իրական իմաստովը բառին: Իր կեանքը աշխարհին վրայ՝ միախառնումն է աստուածայինին ու մարդկայինին: Համբոյրը երկինքին ու երկրին: Երկինքին էջը երկրի վրայ ու երկրին երկնայնացումը հոգեկան կեանքի ուժեղ բախանցումովը անոր մէջ, ինչպէս արեգակի շողին քափանցումը խոր մթութեան մէջ, գիշերին ցերեկի փոխակերպումով:

Քրիստոսի մարդեղութիւնը շաղթանակն է Աստուծոյ՝ մարդուն ԵՍ-էին վրայ: Ինչքա՞ն չարիքներ իրենց արմատ ունին այդ գծում եւ-ը, որ կը խեղդէ կեանքը, կը սաճնէ բռնիքը, կը գոցէ սիրտը, կը փակէ հորիզոնը ու կը սպաննէ անհատը, ընկերութենէն առաջ:

Աշխարհի անծայրածիր տա-րածութեան մէկ ժայռաշէն անկիւնին մէջ, իսողադութեան, ի մարդիկ հաճութեան, արդարութեան, ստեղծագործութեան, հաղորդ եւ ատակ ժողովուրդ մը կ'ապրէր: ՀԱՅ անունով ցեղն էր ան, ցեղերու ներդաշնակօրէն միազանգեալ փունջ մը, որուն համար Բեթլեհէմի երկնակամարին վրայ նորոգումը հրեշտակային երգը իրայատուկ, յանկուցիչ գրաւչութիւն մը ունէր:

Նայինք պատմութեան, իմաստութեան այդ

յստակացոյց հայելիին: Դարերու ընթացքին շատ բան կորսնցուցինք մեր կեանքի մէջ. բայց անկորուստ եւ անմուղ պահեցինք քրիստոնեական աղբիւրն քիւմը:

Ինչ որ մեր քննամին չկրցաւ ընել բռնի ոյժով, այսօր կրնան զայն ընել աշխարհացրի մեր գոյութեան մէջ այնպիսի ոյժեր, որոնք առանց սուրի եւ եսթաղանի, առանց արիւնի եւ արեւի կը սպառնան մարել այդ կեանքի բոցը մեր հոգիներու կանթեղներուն մէջ: Արտասահմանի չորս հովերուն բացւած բոց մըն է մեր հոգին: Հովերը կը փչեն աշխարհի չորս ծագերէն: Չեն կրնար, սակայն, զայն մարել, եթէ անոր կեանք տուող խլը՝ մեր քրիստոնեական հաւատքը, մեր թգգային արժանապատուութեան գիտակցութիւնը, մեր լեզուին կենդանագործ եւ ինքնաշէտ առկայութիւնը, մեր մշակոյթին արժեքներու ճաշակն ու հաղորդութիւնը չցամքն մեր մէջ:

Չենք կրնար Լոյս-Աստուծուն հետ հաղորդը ըլլալ առանց այդ հաղորդութիւնը արտայայտելու մեր նմաններուն հետ, խաղաղութեան, հաճութեան, եղբայրութեան, միութեան, գործակցութեան քրիստոսաբեր ու արեւաբեր սկզբունքներուն կիրարկութեամբ, իրացումովը, գործնականացումովը մեր հաւաքական կեանքի անդաստանին մէջ:

Հաւատք. այն ներքին զգացողութիւնն է մեր մէջ, որ վստահութեան, ապահովութեան զգացումը, գաղափարը եւ հոգեկան մթնոլորտը կը կազմաւորէ եւ որ մեզի ոյժ կը ներշնչէ: Չկայ անհաւատ մարդ: Անհաւատը կը հաւատայ իր անհաւատութեան. այլ խօսքով, անհաւատութիւնն է իր աստուածը: Առանց հաւատալու մարդ չի կրնար շնչել: Հետեւաբար, եկէք մենք շնչենք մաքրամաքուր քրիստոնեական հաւատքը, ինչպէս շնչեցին ու այդ շունչով զօրացան մեր հայրերը:

Քրիստոնեական հաւատքին ամենէն ուժեղ տրոփը, ներկայութիւնը, ներգործութիւնը պէտք է զգանք մեր այսօրուան կեանքին մէջ, որովհետեւ քրիստոնեական հաւատքը յոյս կը ներշնչէ մարդուս ամեն ժամանակ եւ ամեն տեղ:

Յաճախ մարդկային հաշիւները դէպի անյուստութիւն կը տանին մեզ: Հաւատքն է, որ կը բանայ մեր աչքերը ժամանակէն ու գերեզմանէն ալ անդին եւ մեր անմահութեան տենչին նոր մղում կու տայ ու մեր կեանքին իմաստ ու գեղեցկութիւն կ'ընծայէ:



Շատ բան կու տանք Կայսրին: Եւ կու տանք ամէն ոք: Չմոռնանք տալ Աստուծոյն այն, ինչ որ Աստուծոյն կը պատկանի եւ որուն գերագոյն բարիքը մեզի իր Միածին Որդւոյն Յարութիւնն է, Յոյսերուն Յոյսը, Ոյժերուն Ոյժը, Գերագոյն Մերը, որ խաչի ճամբով կը քալէ՝ հասնելու համար Յարութեան եւ յարուցեալ կեանքի վայելքին:


Հայ ժողովուրդը իր կեանքի բոլոր տեսակի վերիվայրումներու յուսալքի վայրկեաններուն, տառապանքի եւ արեւածութեան ամենէն դժխեմ պայմաններուն տակ միշտ կենդանի պահեց իր հաւատքը յարութեան վրայ. յարութեան գիտակցութեամբ, յոյսով եւ հաւատքով կշռոյք եւ սնունդ տուաւ իր կեանքին:

Ինչ ալ ըլլան կեանքի պայմանները, որքան ալ նսեմ ու դժխեմ ըլլան առօրեայ կեանքի պայմանները, քրիստոնեայ մարդը չի կրնար կտրուիլ ուրախութեան աստուածային աղբիւրէն: Բոլոր սուրբերը, բոլոր մարտիրոսները իրենց կենդանի մարտիրոսութեան, չարաբանքի ամենէն ծանր պահե-րուն նոյնիսկ իրենց հոգիներուն մէջ երբեք չցամքեցուցին ուրախութեան այդ աղբիւրը:

1700-ամեակը պիտի դառնայ ոչ թէ անցեալի դէպք մը պարզ վերլիշումը կամ սոսկ պահ-ծացումը, այլ մեր ժողովուրդի այսօրուան եկեղեցական կեանքին վերաշխուժացումը, տեսակ մը ներքին հոգեւոր վերանորոգումը հայ եկեղեցիին:

1700-ամեակի տօնակատարութիւնը մարդոջ հայութեան համար ի մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի պէտք է դառնայ տեսակ մը նոր մկրտութիւն, քրիստոնեական հաւատքին գիտակցական խորագիշակի անդրադարձումը մեր կեանքին, ներթափանցումը մեր հոգեկան աշխարհին, կեանքը ապրելու մեր եղանակներուն մէջ:

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԵՐԻՑ



Հայ Առաքելական Եկեղեցու Կանադայի բնիկ առաջնորդարանը Տ. Հովհանն արքեպիսկոպոս Տերտրյանի առաջաքանով լույս է ընծայել Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինի ասույթների եռալեզու (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն) պարկերազարդ ընդարձակ «Խոհեր» վերնագրով (կազմող՝ Արմինե Քոչկերյան):

Մեր ընթերցողին ենք ներկայացնում Վեհափառ Հայրապետի ասույթների մի փոքր:

Մարդը հանդիպում է երկրի երկրի: Այսօր էլ մեր մեջ միջազգային աշխարհն ու յախտենական ճշմարտությունը հանդիպում են իրար... Եթե երբեք հայի մեջ արթնացնեք մարդը, մարդագործներ մարդու կերպարը, որ մա լինի Աստուածաշնչի Սաղմնաց գրքի ասած՝ իրեշտակներից մի փոքր վար, էակներից՝ վեր, այնժամ կը փրկուի մեր հայրենիքը...

Ո՛վ ես դու, մարդ, որքա՛ն մեծ է արժեքը Աստուծոյ աշքին, ճանաչիր արժեքն այդ:

Դա է մեր փրկություն, մեր զօրություն, մեր երջանկություն, մեր յաղթանակի գաղտնի ճամբան: Քայլե՛ք այդ ճամբայով:

Կենքը, որ մենք ապրում ենք, Աստուծո գերագույն տուրքն է, ամենէն ընտիր, քանկահին տուրքը, որ մարդ կարող է երբեքից երեսակայել կամ ունենալ: Եւ մենք այդ կենքի տնտեսներն ենք: Այդ կենքը ապրելու, այդ կենքով լիարժեք գործելու, Աստուծո արժանի եւ Աստուծո հաճելի գործ կատարելու, որպէսզի արժանի լինենք մենք այդ նուրի ստացմանը, կենքին, որ մեզ համար ամենից քանկ բանն է մեր ամբողջ գոյութեան ընթացքին:

Փռչի դարձողը միս ու ոսկորն է, իսկ մարդը միս ու ոսկոր ունեցող, բայց միս ու ոսկոր չնդող այն էակն է, որ ունի հոգեկան ապրումներ, գաղափարներ, ունի իտեալներ եւ մանաւանդ կենքի մէջ ստեղծագործութեան եւ յառաջդիմութեան անյազ տենչ է անսանձ քոչը: Եւ մենք ենք, որ մեզի կը յիշեցնեն, թէ իրենք

կ'անցնին, իրենց անցնելիք միս ու ոսկորով, բայց կ'ապրին, որովհետեւ իրենց հաւատքը, գաղափարը, ստեղծագործութիւնը վեր կը մնան հողայնութեան օրէնքներն:

Քրիստոնեութիւնը աղեղաւ մեր ժողովրդի հոգեկան կենքի համար: Եւ Հայաստանեայց Եկեղեցին հանդիսացաւ աղանման, որտեղից մա ստացաւ իր համեմէլ հիւրը դրանով իր կենքն անելու համար անելի իմաստալի եւ ուրախալի, մանաւանդ երբ տրտմութեան եւ վշտի սկսեց սուր խոցում էր սիրտը հային, եւ վիատութեան ամպը փորձում էր քանձօրեմ նստել մրա հոգու մէջ...

Այն մարդը եւ այն ազգը, որ կը կարծիք գիրքի աշխարհէն՝ չոր անապատ ու տափաստան կը դառնան, ուր միայն փուշն ու տատասկը, օձն ու կարիճը տուն կը գտնեն... Գիրքի աշխարհին մէջ ապրող մարդն ու ազգը իրենց կենքը անուի կը վերածեն, ուր կենդանութիւնը կանաչավառ կերպարան կը գցեն ու պտղաւոր կը գեղեցկանայ:

Հոգեւորականութիւնը կը ճշմանակէ խաչելութիւն, ան որ խաչը շալկելու քաջութիւնը չունի, չի՛ կրնար Քրիստոսի աշակերտ եւ նահատակներու շատաւիղ ըլլալ:

Գիրքը մարդկային կեանքի ամենէն մեծ չարիքն է: Դատարկութիւնը վիհ է, եւ վիհը՝ կորուստ: Դատարկութիւնը մահ է, եւ մահէն անելի ծանր դժոխք: Եւ ճիշտ այս սուր եւ շեշտօրէն բացայայտ ճշմարտութեան համար մարդ էակը չի կրնար հանդուրժել դատարկութեան, ինչպէս աստուածատեղծ բնութիւնը խորք է պարապութեան, եւ այդ իսկ պատճառ կը տարուի դատարկութիւնը ձեռով մը լեցնելու: Կան մարդիկ, որոնք հաճոյքով կը լեցնեն պարապութիւնը: Ուրիշներ՝ ժամանցով կը մեռցնեն տառապանքը՝ դատարկութեան: Բայց երկու պարագաներուն ալ ուրիշ քան չենք ունենար, բայց եթէ խաբկանքը լեցումութեան եւ ոչ թէ լեցումութիւնը՝ ինք: Լեցումութիւնը սեփական մտածումի, աշխատանքի, յանձնառութեան ու նուիրեալ ծառայութեան մէջ կը կայանայ: Այդ լեցումութեան վաւերական եւ յորդառատ աղբիւրներն են կիրքը:

Աղօթքը մարդու հոգեկան շնչառութիւնն է: Ինչպէս մեր ֆիզիքական մարմինը շնչառութեան պէտք ունի ապրելու համար, այնպէս էլ մեր հոգին աղօթքի պէտք ունի առողջ մնալու եւ յանձնօրէն ապրելու համար:

Աղօթքը բառ եւ խօսք չէ, մարդ կարող է շատ բան խօսել, բայց չաղօթել, կարող է եւ ոչ մէկ բառ արտասանել, սակայն աղօթել զգացումով...

Աղօթքը Աստուծոյ՝ մեզի տուածին արժեւորումն է, մեր կենսով եւ գործով:

Մենք հարուստ պատմութիւն ենք ունեցել, բայց մեր ազգը չափաւ սահմանափակուի պատմութեամբ: Մենք միայն քանգարաններ ունեցող ազգ չենք, այլ՝ առաջ, դէպի ապագան ընթացող ազգ: Եւ որքա՛ն խորիմաստ ու ճշմարիտ են մեծ պատմաբանի եւ փիլիսոփայի հետեւյալ խօսքերը. «Քաղաքակրթութիւնը ճամբորդութիւն է եւ ոչ թէ նաւահանգիստ»: Մեր պատմութիւնը նաւահանգիստ չէ, այլ՝ շարժում, առաջ դէպի ապագան:

Հայոց պատմութեան մէջ շատ աղանդներ երեսացին, բորբորումներից սկսեալ մինչեւ արեւորդները, բայց քանու պէ եկան եւ քանու պէ գնացին: Օտար եկեղեցիներ օտարամիտ վարդապետութիւններ քարոզեցին հազար ու մի եղանակներով: Չկարողացան խափանել եւ խախտել Հայաստանեայց Եկեղեցու վճիտ հաւատքը՝ Հայաստանում առաքելներով քարոզած եւ Լուսաւորչով կնքուած ու մեր սուրբ հայրերի հոգեղէն քարոզութեամբ ծաղկած: Հայաստանեայց Եկեղեցու դերը մնաց անբաւարար եւ անփոխարինելի:

Աւանդութիւնները ազգերու ինքնութեան շաղախիչ տարրերն են, որոնք երբ անտեսուին, մոռցուին, արհամարհուին՝ գոնատուրիւն եւ կերպախաբարում յառաջ կը բերեն այդ ազգերու դիմագծութեան վրայ եւ, ի վերջոյ, դէպի մօտաւորում եւ ազօտութիւն, թուլացում եւ անեացում կ'երթան անոնք:

Աւանդութիւնները խաբխախտ են անութեան եւ տոկունութեան: Հանցեք զանոնք ժողովուրդներու կենքէն, ազգերը կը տատանին անբարձատեղեզներու պէս եւ կը քափին ճիւղերէն փրքած տներներու ման:

Մարդու արժեքը երբեք իր ունեցածին մէջ չէ, այլ՝ իր տուածին մէջ: Լաւ իմացք բանաստեղծին պէս՝ Վահան Թեքեանի, որ ասում է. Ի՞նչ մնաց, կենքէն ինձի ի՞նչ մնաց. Ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ, այդ միայն: Գրագէտ լինի, տաղանդաւոր գրող լինի, բայց չգիր, ի՞նչ արժեք ունի: Մի արուեստագէտ սքանչելի ծայն ունենայ, բայց չերգի, ի՞նչ արժեք: Ինչ որ կը մնայ, ոչ թէ դու ես քո ունեցածով, այլ դու ես քո տուածով:

ՎԱՄՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ, ԺՈՂՈՎՐԴԻ ԵՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ



ԱՄՆ նախագահ Բիլ Բիլքլոնի հետ, Վաշինգտոն, հունվարի 16, 1996 թ.



Յրանխախի նախագահ Ժակ Շիրակի հետ, փետրվարի 6, 1997 թ.



Անգլիայի Լորդերի պալատում, նոյեմբեր, 1997 թ.



Մերմիկ գրույց ՀՀ նախագահ Ռոբերտ Բաղդասարյանի հետ

ԶԲՈՅՍ Ի ՔՈՅՈՑ ԲԵՉ ՄՆԱՏՈՒՑԱՆԵՄԲ

Հայոց Հայրապետի մահվանը ողջ հայաշխարհը պատանձ սգի այս օրերին ամեն մեկն իր սրտի խոսքն է ասում. հիշատակի, հիշողության, միխթարության խոսքը: Բայց այդ սրտանցի բազմաժանրության մեջ բազմաթիվ են նաև Վեհափառ Հայրապետի «հոգեզավակները» խոսքերը, Հայ եկեղեցու այն կառույցների, որոնք ստեղծվել, կյանքի են կոչվել նրա կամքով ու օրհնությամբ: Բազմապիսի ու բազմազան են դրանք՝ ամբողջական բեմեր Հայաստանում ու արտերկրում, վերաշինված ու նորաշեն բազմաթիվ եկեղեցիներ, Հայաստանական բարոգություն կենտրոններ: Լ. Էջմիածնում, վերակառուցված Գեորգյան ճեմարանը, 1700-ամյակի գրասենյակը, Մաշտոցի դպրատունը մշակմուն, Հոգևոր խորհրդակցության գրասենյակը Հայոց բանակում են այլ: Վեհափառ Հայրապետի «հոգեզավակն» է նաև մեր բերքը՝ «Հայաստանի Հայաստանը»:

Հիմա շատ դժվար է մի քանի տողով պատմել այն ճեմ հոգատարությանն ու խորհրդական մասին, որ Գարեգին կաթողիկոսն ուներ այս հրաշալիությունը մեկտեղում: Նա ընդհանրապես նախաձեռնությունը բաշխեց իր բոլոր այն գործերի, որոնք կոչված էին ծառայելու ժողովրդին, եկեղեցուն ու ժողովրդի մեծերաներին, և այդ առումով մշտապես հետադարձվում էր բերքի գործերով: Իմեն էլ անվանակոչվեց բերքը՝ «Հայաստանի Հայաստան», որը սոսկ անվանում չէր, այլ իր երազն էր ու տեսիլը, քանզի ուզում էր, որ մեր սիրտսում հայրենիքն իբրև Հայաստանի Հայաստան դառնա: Հատկանշական է, որ 97-ի մարտին բերքի առաջին համարին տված հայրա-

պետական քաջալերանքի խոսքում գրում է. «Խորհրդային շրջանի 70 տարիներու պատճառաւ բնութեան դէմ զարթոյցի խթան բող ըլլաւ «Հայաստանի Հայաստան»-ը: Թող աւելի պէս սրբէ անաստուծութեան, անտարբերութեան հետեւերն ու վերքերն եւ բող սերունդացմի պէս վերստին ցամէ Հայաստանի Ս. Անտարա-նին եւ մեր Սրբազան Հայրենայ շունչն ու ոգին, խօսքն ու գործը մեր նորակալա-ցեալ Հայաստանի ժողովրդին»:

Հայրական ջերմ սիրով կը յանձնարարէր զայն մեր քրիստոնեայ հայ ժողովրդին, որպէսզի առաւել պայծառ գոյն ստանալ հայուրիւնը քրիստոնեականում:

Երջանիկ ենք, որ անցողի երկու տարիներին կարողացանք մեր ուժերի ներառելով Հայաստանի արդարացին Վեհափառ Հայրապետի վստահությունը, որը մեր առաջին և ամենաշատադիր ընթերցողն էր ու մառն ուսուցիչը, խորհրդատունը:

Մոռանալով ըստ է. որ այս գարնան վերջին, ամառ ծանր հիվանդ վիճակում, Վեհափառ անհամբեր էր բերքի հերթական համարն ստանալու: Երբ ինձ տեսավ, կանչեց ու ձեռքին եղած բերքիկ վրա գրեց. «Հայաստանի Հայաստան» ո՞ր է: Ուզում եմ տեսնել»:

Սիրելի՛ եւ անմոռանալի՛ Վեհափառ Տեր, Ձեր իմնումը «Հայաստանի Հայաստան» պիտի շարունակի ընթանալ Ձեր ուղեւշառ շավիղով, պիտի խառնարի Ձեր սրբազան պատգամները, դառնա «գարբուցիլ խթան» ու անդադրում զանգալատուն այնքան ժամանակ, մինչև որ մեր բիրիկական երկիրն իբրև դառնա Ձե՛ր երազած Հայաստանը՝ Հայաստանը:

Կարեն ՄԱԹԵՈՒՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՈՒ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴԵՄԱՐԱՆԸ

«Խորհե՛ք մտրի»...

Այս քառերեն են արձանագրված Աբգիլիսի դպրեվանքի մուտքի ճակատին, մի դպրության օջախ, որ սոսկ քարեղեն շինություն չեղավ, այլ դարձավ բարախում սիրտ ու հոգի եւ իր ծոցից հայ ժողովրդին պարգևեց աստվածաբայ Հայրապետին, որն արդեն ինքը ուրիշներին առաջնորդեց խորհելու եւ տնտեսու աստվածային գալիքի ներս՝ մոտ հիսուն տարի շարունակ...

Ընդհանրապես Հայրապետն իր ողջ հովվապետության ընթացքում անմեղացորդ սեր եւ մկրտում դրսևորեց նախ Աբգիլիսի դպրեվանքի նկատմամբ, որտեղ տարիներ շարունակ տեսու է եղել, ապա կյանքի վերջին չորս տարվա ընթացքում իր հարուստ փորձառությունը փոխանցեց Սուրբ Էջմիածնի Գեորգյան հոգևոր ճեմարանին:

Գալով Մայր Աթոռ՝ Գարեգին Ա կաթողիկոսը հարազատորեն շարունակեց Վազգեն Ա-ի սկսած առաքելությունը: Նորին Սրբության հետևողականության արդյունք էր Գեորգյան ճեմարանի շենքեր իր իսկական տեղերին վերադարձնելն ու հիմնովին նորոգվելը, որի շնորհիվ հնարավոր եղավ ճեմարանականների բիլիո հասցեն վերջին հարյուր քառ հոգու: Կառուցման ընթացքի մեջ է ճեմարանականների արդիական հանրակացարանը:

Գարեգին Ա կաթողիկոսի անդուլ ջանքերի շնորհիվ ճեմարանում գաղթիկներ բարեկամվեցին պայմանները, ստեղծվեց կոմպյուտերային լաբարան: Վեհափառ Հայրապետի հրավերով ճեմարանում դասավանդելու եկան համարապետության լավագույն մասնագետներ: Եւ որ ամենակարեւորն է՝ Նորին Սրբությունն ինքը գլխավորեց ճեմարանի դասախոսական կազմը եւ իր հայրական ջերմությամբ ու գործով առաջնորդեց ճեմարանը:

Ուսուցչությունից գալու, Նորին Սրբությունն

առանց բացառության այցելում էր ուսանողներին կազմակերպած բոլոր միջոցառումներին ու հանդիպումներին եւ իր հայրական պատգամն էր հղում դժվարին առաքելության պատարժանողներին: «Առաքյալները ժամանակին կպատկանեցին, բայց առաքելությունը հավիտենական է»,- ասում էր Վեհափառ Հայրապետը Վարդանանց տոնին նվիրված հանդիպությանը:

